ԵԴ2/36922/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 նոյեմբերի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «Հիպերնովա» ՍՊ ընկերության հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Հիպերնովա» ՍՊ ընկերության անունից 06.11.2023 թվականին հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/76 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ թիվ ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/76 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.09.2023 թվականի թիվ 2 արձանագրային որոշումը՝ «Հիպերնովա» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Ն. Ավետիսյան) 2023 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները շտկելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու համար եռօրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցադիմումը կրկին դատարան է ներկայացվել 2023 թվականի նոյեմբերի 20-ին, նույն թվականի նոյեմբերի 21-ին մակագրվել դատարանի դատավոր Լ. Սաղոյանին, իսկ աշխատակազմին է հանձնվել՝ 23.11.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Քննության առնելով ներկայացված հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Հիպերնովա» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/76 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ թիվ ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/76 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.09.2023թվականի թիվ 2 արձանագրային որոշումը՝ «Հիպերնովա» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և համարել դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2024 թվականին հուվարի 11-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**